ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 օգոստոսի 2023 թվականի N 1332 - Ն

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԴՐԱ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ, ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ, ՎԵՐԱՆԱՅՄԱՆ, ԿԱՍԵՑՄԱՆ, ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ, ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ, ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ, 37.1-ին հոդվածի 10-րդ մասերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) ջրօգտագործման թույլտվության տրամադրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ջրօգտագործման թույլտվության վերաձևակերպման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) ջրօգտագործման թույլտվության վերանայման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) ջրօգտագործման թույլտվության կասեցման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) ջրօգտագործման թույլտվության ուժը կորցրած ճանաչելու կարգը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) ջրօգտագործման թույլտվության դադարեցման կարգը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) հորատանցքի անձնագրերի և հորատանցքի նախագծային երկրաբանա-տեխնիկական կտրվածքի ձևերը՝ համաձայն NN 9 և 10 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կարգերը, ջրաղբյուրի, հորատանցքի անձնագրերի և հիդրոերկրաբանական հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին» N 218-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

04.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ